ՓԱՌՔ ՄԵԾԱԾ

ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.—Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ձեռնամուխ է եղել Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը պատկերող մի աշխատության, որտեղ փաստերի ու թվերի լեզվով, ժամանակագրական հաջորդականությամբ, շարադրվելու է Վեհափառ Հայրապետի կյանքը, սկսած նրա ծննդյան օրվանից: Աշխատանքները հանձնարարված են բանասիրական գիտությունների թեկնածու, հանրապետության Պետական մրցանակի դափնեկիր Սուրեն Շտիկյանին: Աշխատության առաջին գիրքը, որն ընդգրկելու է 1908—1955 թվականների ժամանակահատվածը, լույս կտեսնի 1985 թվականին:

Ստորև հրապարակելով մի հատված հիշյալ աշխատությունից, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը դիմում է իր ընթերցողներին հետևյալ խնդրանքով: Ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքահայության լայն շրջաններում, անշուշտ շատ կան թե՛ աշխարհական անձինք և թե՛ մանավանդ հոգևորականներ, որոնք մոտիկից ճանաչել են Վեհափառ Հայրապետին՝ նրա կյանքի ամենատարբեր ժամանակաշրջաններում և ուրեմն, հուշապատումներ կունենան նրա մասին, կամ իրենց անձնական արխիվներում պահած կլինեն տարիների ընթացքում Վեհափառի՝ իրենց գրած նամակներն ու կանական գրությունները, կամ կունենան հանդիպումների արդյունք հանդիսացող կարևոր լուսանկարներ և այլն: Այդպիսի նյութերը, ինչքան էլ դրանք փոքր ու ան-

նշան լինեն, անգնահատելի արժեք կներկայացնեն հրատարակվելիք տարեգրության համար, և ուրեմն, կարող են մեծապես օգտակար լինել: Ուստի, ամսագրի խմբագրությունը խնդրում է իր հասցեով ուղարկել նման բնույթ ունեցող բոլոր նյութերը, դրանք գործածության մեջ դնելու նպատակով: Ըստ ուղարկողի ցանկության՝ այդ նյութերը նույնությամբ ետ կվերադարձվեն, իսկ աշխատության մեջ օգտագործվելու դեպքում՝ կհիշատակվի առաքողի անունը:

Մայր Աթոռը և «Էջմիածին» ամսագիրը լիահույս են, որ Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայությունը մեծապես կօժանդակեն իրենց, սկսված այս կարևոր աշխատանքը է՛լ ավելի հաջողությամբ իր ավարտին հասցնելու գործում:

1908

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20.—Բուխարեստում (Ռումինիա), արհեստավորի ընտանիքում ծնվեց Կարապետ Աբրահամի Պալճյանը (հետագայում՝ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Տ. Տ. Վազգեն Ա): Հայրը՝ Աբրահամ Կարապետի Պալճյան (1869 թ. Ռոդուստո — (արևմտյան Թուրքիա) — 1939 թ. Բուխարեստ), մասնագիտությամբ կոշկակար, մայրը՝ Սիրանույշ Մարգարի Պալճյան (մինչև ամուսնությունը Մարգարյան, 1884 թ. Ադրիանապոլիս— 1974 թ. Երևան), հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի նախ՝ Ռոդոստոյի «Ս. Խաչ» և «Ս. Թագվոր» թաղերի հայկական դպրոցներում: Ընտանիքը դավանում էր հայ լուսավորչական հավատը:

«Էջմիածին», 1955, № 10—11 («Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի կենսագրությունը»), 1974, № 10 («Մահ տիրամոր՝ Սիրանույշ Պալճյանի»):

«Մեր ընտանիքը, սովորական, ըստ ասենայնի հայկական ընտանիք լինելով հանդերձ, ուներ մի քանի առանձնահատուկ գծեր, որոնց մասին արժե հիշատակել: Հայրս, չնայած մասնագիտությամբ կոշկակար էր, բայց մեծ հակում ուներ դեպի այն ամենը, ինչ հայկական էր ու ազգային, սիրում էր հայկական ժողովրդական երգն ու երաժշտությունը: Բնավորությամբ հանգիստ մարդ էր, բարի, ներողամիտ, մի քիչ էլ պարզամիտ: Դրանից էլ հաճախ օգտվում էին նրա գործընկերները՝ տանել—չվերադարձնելու, խոստանալու—չկատարելու առումով, որի համար էլ երբեմն արժանանում էր մորս կշտամբանքին: «Էլի՞ քեզ խաբեցին,—նման դեպքերում հանդիմանանքով լի ձայնով հարցնում էր մայրս, որին հայրս պատասխանում էր իրեն բնորոշ պարզությամբ. «Է՜, դիմացինս մարդ էր, չհավատայի՞»: Հայրս աշխատասեր էր, սիրում էր իր գործը, լավ տիրապետում էր իր արհեստին, բայց որովհետև առևտրի առումով ոչ մի հակում և ընդունակություն չուներ, այդ պատճառով էլ մենք մշտապես, առավել քան համեստ գոյություն ենք պաշտպանել:

Հորս հակապատկերն էր մայրս, ինչպես հաճախ նրան կոչում էին Բուխարեստում՝ «Սիրանույշ վարժուհին»: Նա արթնամիտ կին էր, աշխատասեր ու եռանդուն, ընտանիքի հետ առնչվող բոլոր տիպի ֆինանսական-տնտեսական խնդիրներում՝ հաշվենկատ ու գործագետ: Կարողանում էր ընտանիքում ներքին կարգապահություն ստեղծել: Նա ջերմ նախանձախնդիրն էր այն ամենի, ինչ հայկական էր ու ազգային-սեփական,—ի դեպ այս հարցում հայրս էլ ետ չէր մնում նրանից,—և ամենայն հեռնողականությամբ դրանք աշխատում

էր ներդնել մեր ընտանիքում: Մեր տան խոսակցական լեզուն միայն հայերեն էր, և եթե ես առօրյա հաղորդակցության ժամանակ արտաքերում էի որևէ խոսք այլ լեզվով, մայրս անհապաղ ուղղում էր ինձ, ասելով դրա հայերեն համապատասխանը: Նրա այդ վարքագծի հետևանքով էլ, մեր ընտանիքը մինչև վերջ պահպանեց իր շատ որոշակի արտահայտված ազգային-հայկական նկարագիրը: Մայրս հասարակական գործչի որոշակի արտահայտված կարողություններ ուներ և չնայած ընտանեկան բազում գործերին, ժամանակ էր գտնում իր եռանդուն մասնակցությունը բերելու Բուխարեստի հայկական համայնքի հասարակական-մշակութային գործերին: Հոդվածներով աշխատակցում էր Հայր Պոստրյանի հրատարակած «Երկիր» շաբաթաթերթին:

Մեր ընտանիքը խաղաղ էր, հանգիստ, տանն իշխում էր համերաշխության ոգին»:

(Վեհափառ Հայրապետի հետ 1983 թ. ապրիլի 27-ի հարցազրույցից):

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23.— Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում (լրիվ ձևով՝ «Սուրբ հրեշտակապետք Գաբրիել և Միքայել») Հարություն քահանա Սարգսյանի ձեռքով և Պետրոս Սուքիասյանի կնքահայրությամբ, տեղի է ունենում Կարապետ Աբրահամի Պալճյանի մկրտության արարողությունը: Մկրտվողին տրվում է երկրորդ՝ «Լևոն» անունը և ըստ այդմ նա վերանվանվում է Լևոն-Կարապետ Աբրահամի Պալճյան:

Վեհափառ Հայրապետի հոգևոր և հասարակական հետագա կյանքում այնքան նշանակալից դեր խաղացած «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցին կառուցվել է 1743 թվականին, Ակնեցի առևտրական Հովվյան Հարություն ամիրայի ջանքերով ու դրամական օժանդակությամբ և նախապես եղել է շատ փոքր ու անշուք: Ըստ Հ. Ճ. Սիրունու՝ «հավանորեն փայտաշեն, բայց հարուստ» այս եկեղեցին, թուրքական հրուակների՝ 1769 թ. Բուխարեստի վրա կատարված հարձակման հետևանքով, հիմնավորապես կողոպտվում է, իսկ մի քանի տարի անց, կոհ է գնում քաղաքում ծագած մեծ և կործանարար հրդեհին: 1781 թվականին, հիշյալ Հարություն ամիրայի թոռների՝ Պողոս, Չոբան և Գաբրիել Հովվյանների ֆինանսական օժանդակությամբ, ավերված եկեղեցին հիմնովին վերակառուցվում է, նախորդի համեմատ դառնալով ավելի «գեղեցիկ, քարաշեն և փառավոր» և այդ ժամանակվանից էլ վերջնականապես ստանում է «Սուրբ հրեշտակապետք Գաբրիել և Միքայել» անվանումը: 1895—96, և մանավանդ 1908 թվականներին, երբ Թուրքիայի վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով գաղթական հայերի նորանոր հոսանքներ ապաստան գտան Ռումինիա և մանավանդ Բուխարեստ, եկեղեցին «ոչ միայն հինցած էր տարիներու ընթացքին, այլև նեղ կուգար տեղի հայության հոգևոր կարիքները բավարարելու համար» և տեղիք էր տալիս լրացուցիչ դժվարությունների: Նկատի առնելով այս հանգամանքը, Բուխարեստի հայության ջանքերով և հայրենի մեծահարուստների դրամական օժանդակությամբ (Գրիգոր Ա. Մելիք, Արսենակ Մանիսալյան, Ռոբերտ Ասլան, Հակոբ Օհանեսյան և այլն), 1911 թ. սկսվում են «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցու հիմնական վերակառուցման աշխատանքները (ճարտարապետ՝ «յալգէն Ռումենաց պարոն Տ. Մայմարոլի»), որոնք տևում են շուրջ չորս տարի: 1915 թ. սեպտեմբերի 6-ին, Բուլղարիայի հայոց

առաջնորդ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի ձեռքով, կատարվում է «Սուրբ Հրեշտակապետք» հոյաշեն եկեղեցու հանդիսավոր օծումը և բացման արարողությունը: Տարիներ անց, **Վազգեն Պալճյան եպիսկոպոսի** առաջնորդության օրերին, Բուխարեստի հայ եկեղեցին ավանդություն մը որդեգրած է: Ամեն տարի Ծաղկազարդին (իմա. մարտի վերջ—ապրիլի սկիզբ. Ս. Շ.) կոգեկոչե հիշատակը եկեղեցվո սատարողներուն, առաջին կառուցողներեն սկսյալ, մինչև մեր օրերու նվիրատուները, բոլորն անխտիր»:

Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցին գոյություն ունի առ այսօր, և թեև կորցրել է այն անփոխարինելի դերը, ինչ որ ուներ առաջ, Ռումինուհայ համայնքի ծաղկման շրջանում, բայց իր համեստ հնարավորությունների ու կարողությունների սահմաններում, շարունակում է իրականացնել քաղաքի ամբողջ հայկական համայնքի հոգևոր-մշակութային կյանքը կազմակերպելու և խթանելու հետ կապված աշխատանքները:

Կաթողիկոսական դիվան, Վազգեն Ա կաթողիկոսի անձնական ֆոնդ («Վկայագիր մկրտության» № 51): **Հ. Ճ. Սիրունի,** «Հայ եկեղեցին ռումեն հողի վրա. Նիկոլա Յորգա», Էջմիածին, 1966, էջ 54—63:

1913

ԳԱՐՈՒՆ.—Սիրանույշ Պալճյանը, իր որդու՝ Լևոն-Կարապետ Պալճյանի հետ միասին, Բուխարեստից ուղևորվում են Պոլիս, ի տեսություն իրենց հարազատների:

«Վազգեն Ա Հայրապետ Հայոց (կենսագրություն, կոնդակներ, քարոզներ)», Էջմիածին, 1958, էջ 10:

«Պալճյանների ազգաբանական տոհմածառը մեկ ներկայանում է հետևյալ ձևով: Հայրս՝ **Աբրահամ Պալճյանը**՝ ծնունդով Ռոդոստո քաղաքից (արևմտյան Թուրքիա), անցյալ դարի՝ հավանորեն 80-ական թվականներին, ընտանիքով փոխադրվում է Պոլիս: Երբ ծայր են առնում 1895—96 թթ. հայկական հանրածանոթ ողբերգությունները, որոնք իրենց առավել սուր ձևերով դրսևորվելու էին Պոլսում, նա 1898-ին, մեծ դժվարությամբ փոխադրվում է Բուխարեստ Բուլղարիայի վրայով և հաստատվում է այնտեղ: 1907 թ. Բուխարեստում է հաստատվում նաև մայրս՝ Սիրանույշ Մարգարյանը. ծնված Ադրիանապոլսում (թուրք. Էդիրնե. արևմտյան Թուրքիա), որի մայրը նույնպես Ռոդոստոցի է եղել: Նույն այդ 1907 թվականին, Բուխարեստում, Աբրահամ Պալճյանն ու Սիրանույշ Մարգարյանը ամուսնանում են: Ես ծնողներիս միակ երեխան եմ եղել: Հարազատների տեսակետից հայրս բավականին «հարուստ էր»: Նրա մի եղբայրը՝ **Հակոբ Պալճյանը,** ապրում էր Բուխարեստում, արհեստով կոշկակար էր և հաճախ աշխատում էր հորս հետ միասին: Հակոբն ամբողջ կյանքում չամուսնացավ և այդպես ամուրի էլ մահացավ Բուխարեստում: Մյուս եղբայրը՝ **Գրիգոր Պալճյանը,** գրեթե ամբողջ կյանքում ապրեց Բուխարեստում և արդեն մեծ տարիքում ամուսնացավ (կինը՝ Սրբուհի), ունենալով երկու աղջիկներ. Նվարդ և Արշալույս Պալճյան: Հետագայում երկու քույրերն էլ փոխադրվեցին Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Գրիգորը ընդունակ անձնավորություն էր, ինքնուրույն կերպով ջութակ նվագել սովորեց և հաճախ հանդես էր գալիս

պանական ընկերական հավաքույթներում: Կարճատև հիվանդությունից հետո նա վախճանվեց Բուխարեստում: Հորաքույրս՝ **Հռիփսիմե Պալճյանը**, կոշկակար Գևորգ Թիմոսյանի հետ Բուխարեստում ամուսնանալուց հետո, ընդունված հայկական սովորության համաձայն, դարձավ Հռիփսիմե Թիմոսյան: Ունեցել են երկու երեխաներ՝ Կարապետ Թիմոսյան, որը վախճանվել է Էջմիածնում 1983 թվականին, և Նվարդ (Մաննիկ) Թիմոսյան, ծնված Բուխարեստում, 1902 թվականին, որն ամբողջ կյանքում չի ամուսնացել: Հռիփսիմե Պալճյանը տնային տնտեսուհի էր, և նյարդային հիվանդություն ունենալու հետևանքով, ընդհանրապես անառողջ կին էր: Նա վախճանվեց Բուխարեստում, 1926 թվականին: Մյուս հորաքույրս կոչվում էր **Գյուլունիա Պալճյան:** Նա բոլորից ավագն էր և իր կյանքի սկզբնական շրջանում ապրում էր Պոլսում: Հետագայում Հայկ (?) Զաքարյանի հետ ամուսնանալուց հետո, մի որոշ ժամանակ անց փոխադրվեց նախ՝ Բուլղարիա, ապա վերջնականապես հաստատվեց Բուխարեստում և այնտեղ էլ վախճանվեց: Իր քրոջ նման, Գյուլունիա Պալճյանը նույնպես տնային տնտեսուհի էր և ուներ մեկ աղջիկ՝ Մարիամ Զաքարյան: Եվ վերջապես՝ **Հովհաննես Պալճյան** հորեղբայրս, որն ապրում էր Պոլսում, ամուսնացած էր, սակայն մինչև իր կյանքի վերջն էլ ժառանգ չունեցավ: Իր մյուս եղբայրների նման կոշկակար էր և Պոլսում էլ մահացավ:

Պալճյան եղբայրներն ու քույրերը հարալատական ջերմ կապերով կապված էին իրար հետ և առաջին իսկ անհրաժեշտության դեպքում, լիներ դա աշխատանքի մեջ թե ընտանեկան կյանքում, անհապաղ իրար օգնության ձեռք էին մեկնում:

Շատ ավելի համառոտ է մորս կողմի տոհմական ճյուղագրությունը: Մայրս ուներ մեկ եղբայր՝ **Հակոբ**, որը մորս ավագն էր, ծնվել էր 1882 (?) թ. Ադրիանապոլսում և հետագայում փոխադրվել էր Բուխարեստ: Որոշակի մասնագիտություն չուներ և, հետևաբար, Բուխարեստում ոչ մի կոնկրետ գործ չկարողացավ ձեռնարկել: Մի որոշ ժամանակ օգնում էր հորս և հորեղբայրներիս, իրենց աշխատանքի մեջ, սակայն հետո հրաժարվեց դրանից էլ: Վախճանվել է Բուխարեստում, 1960-ական թվականներին»:

(Վեհափառ Հայրապետի հետ 1983 թ. ապրիլի 12-ի հարցազրույցից: Պալճյանների գերդաստանի հետ կապված որոշ մանրամասնություններ մեզ հայտնել է օր. Նվարդ (Մաննիկ) Թիմոսյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը) [1]:

---

[1] Վեհափառ Հայրապետի ազգաբանության հետ առնչվող հարցերն ավարտելու համար նշենք, որ «Պալճյան» ազգանունը, մանավանդ արևմտահայության մեջ, բավականին հաճախ է հանդիպում: Անցյալ դարի 60—70-ական թվականներին պոլսահայ պարբերականներում իր ինքնուրույն ու թարգմանական բանաստեղծություններով, պատմվածքներով հանդես էր գալիս Թովմաս-Գեղամ Պալճյանը, Վիեննայի Մխիթարյան միաբանությունը 80—90-ական թվականներին իր անդամների թվում ուներ ճանաչված հայագետ, բնագրագետ, բանասեր ու թարգմանիչ (ֆրանսերենից-հայերեն) Ալեքսանդր Պալճյանին, Երևանում, այս դարի սկզբին, կային տաճկահայ ծագում ունեցող «Մեղրագործյաններ», որը նույն «Պալճյան» ազգանվան հայերեն թարգմանությունն է և այլն: Վերջիններս, սակայն, ինչպես նաև «Պալճյան» ազգանունը կրող ուրիշ անձինք Վեհափառ Հայրապետի տոհմածառի հետ ոչ մի առնչություն չունեն:

ՀՈՒԼԻՍԻ 30.—Բուլղարական բանակի հետևակային զորամասերը, Մակեդոնիայում, ռազմական գործողություններ են սկսում Սերբիայի, Հունաստանի, Չերնոգորիայի և Ռումինիայի միացյալ բանակների դեմ: Սկսվում է Բալկանյան երկրորդ պատերազմը:

Պատերազմի սանձազերծվելու հետևանքով, Պալճյան ընտանիքի վերադարձը հայրենի Բուխարեստ, անհնար է դառնում:

Рябинин А. А., «Балканская война», СПБ, 1913. **Жабокрицкий В. А.** «Болгария накануне Балканских войн 1912—1913 гг.», Киев, 1960. **«Վազգեն Ա., Հայրապետ հայոց** (կենսագրություն, կոնդակներ, քարոզներ)», Էջմիածին, 1958, էջ 10.

ԿԵՍԵՐ.— Պոլսում, Լևոն-Կարապետ Պալճյանը սկսում է հաճախել Կեսրիկ փաշա թաղամասում գտնվող «Սուրբ Մեսրոպյան» ազգային հայկական ծաղկոցը (իմա. մանկապարտեզ):

Սըվասըլյան Հակ., «Ամենայն հայոց... Վազգեն Ա կաթողիկոս և իր Թուրքիա այցելությունը», Պոլիս, 1961, էջ 5:

ՕԳՈՍՏՈՍԻ 10.—Բուխարեստում, մի կողմից Բուլղարիայի և մյուս կողմից Սերբիայի, Չերնոգորիայի, Հունաստանի և Ռումինիայի միջև, կնքվում է պատերազմական գործողությունների դադարեցման և փոխադարձ հաշտության պայմանագիր: Ավարտվում է Բալկանյան երկրորդ պատերազմը:

«Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях (сост. Ключников Ю. В. и Сабанин А. В.)» ч. I, Москва, 1925, стр. 372.

ԱՄԱՌ.— Աբրահամ և Սիրանույշ Պալճյանները, իրենց որդու հետ միասին, Պոլսից մեկնում են Ռոդոստո: Մոտ մեկ ամիս մնալուց հետո, ընտանիքը վերադառնում է Պոլիս:

«Ռոդոստոյի մեր առաքելությունը շատ էլ լուրջ նպատակներ չէր հետապնդում: Պարզապես ծնողներս ցանկացան տեսնել իրենց ծննդավայրը, իսկ առիթը առավել քան հարմար էր» (Վեհափառ Հայրապետի հետ 1983 թ. ապրիլի 12-ի հարցազրույցից):

ԱՇՈՒՆ.— Աբրահամ և Սիրանույշ Պալճյանները իրենց որդու՝ Լևոն-Կարապետ Պալճյանի հետ մեկտեղ, թողնելով Պոլիսը, վերադառնում են Բուխարեստ:

«Վազգեն Ա Հայրապետ Հայոց (կենսագրություն, կոնդակներ, քարոզներ)», Էջմիածին, 1958 թ. էջ 10—11:

1914

ԱՇՈՒՆ.— Բուխարեստում, Լևոն-Կարապետ Պալճյանը սկսում է հաճախել տեղի հայկական ազգային մանկապարտեզը: Նրա ստացած գիտելիքները տանը լրացնում ու խորացնում էր մայրը:

«Երեխայի նախադպրոցական դաստիարակության գործում առանձնապես մեծ ազդեցություն է թողել նրա սրտի, հոգու և մտքի վրա իր հա-

բուպատ մայրը, որն իր մայրական անխարդախ կաթի հետ, իր կավկին ջամբել է նաև հավատի սրբական հուրը, մայրենի լեզվի քաղցրությունն ու ճաշակը, Հայաստանյայց Եկեղեցու պաշտամունքը, ազգասիրության շունչը ու ոգին»:

Նույն տեղում, էջ 10:

ՀՈՒՆԻՍԻ 28.— Սկսվում է առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը:

1916

ՀՈԿՏԵՄԲԵՐ.— Թուրքիայի ռազմական մինիստր Էնվեր փաշայի գաղտնի հուշագիրը (մեմորանդում) Դանուբյան բանակի հրամանատար, գեներալ Մակենզենին, Ռումինիայում նրա գրավելիք տարածքներում այլալգիների նկատմամբ «խտրական միջոցառումներ» գործադրելու մասին:

ՀՈՒՇԱԳՐԻՑ.— (հույների, հրեաների, գնչուների, գագաուզների նկատմամբ կիրառվելիք խստություններն ու սահմանափակումները նշելուց հետո) «...Հատկապես, գեներալ, Ձեր բարձր ուշադրությունն եմ հրավիրում Ռումինիայում ապրող հայազգի բնակչության վրա, որոնք մեր վարած վերջին քաղաքականության հետևանքով (ակնարկում է 1915 թ. հայկական կոտորածները. Ս. Շ.) ինչ-որ ձևով կարողացան ·ճողոպրել Թուրքիայից և վերաբնակվել այդտեղ: Նրանց նկատմամբ պետք է կիրառվեն խստություններ ամենամեծ չափերով, անպայմանորեն ներառյալ մասսայական տեղահանությունն ու վանգվածաբար ոչնչացումը»:

«Международные отношения 1870—1918 гг. (Сборник документов)», Москва, 1940 г.

ԱՇՈՒՆ.—Իրենց ֆիզիկական գոյությունն ու անվտանգությունը պաշտպանելու նպատակով, սկսվում է հայ ազգաբնակչության վանգվածային արտագաղթը Ռումինիայից: Արտագաղթողները բնակություն են հաստատում Ռուսաստանում: Ընդհանուր հաշվով, արտագաղթում է ռումինաբնակ հայերի շուրջ 85 տոկոսը:

«Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3-րդ, Երևան, 1967, էջ 424—471: **Աբրահամյան Ա. Գ.**, «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» հատ. Բ., Երևան, 1967, էջ 129—141:

ՁՄԵՌ.— Աբրահամ և Սիրանույշ Պալճյանները, իրենց որդու հետ միասին, թողնելով Բուխարեստը, բնակություն են հաստատում Ռուսական կայսրության Օդեսա քաղաքում:

«Հատկապես Օդեսան ապաստարան ընտրելու հիմնական շարժառիթներից առաջինը հետևյալն էր:

Դեռ մինչև Բուխարեստից արտագաղթելը, քաղաքում համառ լուրեր էին շրջում այն մասին, որ օր-օրի վրա առաջացող գերմանական և մանավանդ գեներալ Մակենզենի բանակները, Ռումինիայի՝ իրենց նվաճած շրջաններում նորանոր հայկական ջարդեր են կազմակերպելու: Ավելացվում էր, որ այդ ջարդերը առավել խստությամբ պետք է իրականացվեն մանավանդ Թուրքիայից տարբեր տարիների ընթացքում հեռացած հայերի նկատմամբ (տես 1916 թ. հոկտեմբեր), իսկ իմ ծնողները, ինչպես հայտնի է, հենց այդպիսիների թվին էին պատկանում; Տե-

ղալորվելով Օդեսայում, այսինքն՝ հիմնականում անցնելով Ռուսաստանի իշխանության ներքո, ֆիզիկական ոչնչացման վտանգը ռումինահայերի համար վերանում էր:

Անկարևոր չէր նաև հետևյալ հանգամանքը: Չնայած այն բանին, որ Օդեսան գտնվում էր ռուսական պետության աշխարհագրական տարածքում, բայց այնտեղ մեծ թվով ռումինական վորամիավորումներ կային, որոնք, ինչպես լսել էինք մենք, ըստ իրենց հնարավորության, պաշտպանում էին իրենց հայրենիքից եկած գաղթականներին և անհրաժեշտության դեպքում սատար ու հովանավոր էին հանդիսանում նրանց: Այս էլ, գոյատևելու առումով, բարեբաստիկ վիճակ էր խոստանում մեզ համար, չնայած այն բանին, որ Օդեսան էլ, իր հերթին, ապրում էր անհանգիստ, մարտերով ու արյունահեղություններով լի օրեր (Վեհափառ Հայրապետի հետ 1983 թ. ապրիլի 25-ի հարցազրույցից):

1917

ՍԿԻԶԲ.—Օդեսայում Լևոն-Կարապետ Պալճյանը սկսում է հաճախել տեղի ռուսական դպրոցին կից բացված և հայազգի մտավորական Արմեն Շիտանյանի տնօրինության ներքո գտնվող հայկական նախակրթական դասընթացները: Ուսման թերին տանը, մասնավոր դասեր տալու միջոցով, լրացնում էր կրթական-մշակութային գործիչ, ուսուցիչ Աշոտ Սպանդարյանը:

«Վազգեն Ա Հայրապետ Հայոց (կենսագրություն, կոնդակներ, քարոզներ)», Էջմիածին, 1958 թ., էջ 10:

«Քանի որ պատերազմի հետևանքով հազարավոր հայ գաղթական ընտանիքներ ապաստանել էին Օդեսայում, բնականաբար նրանց երեխաները զուրկ էին որևէ տիպի հայկական ուսում ստանալու տարրական հնարավորությունից: Նկատի ունենալով այս հանգամանքը, տեղի հայ մտավորականությունը, կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր Արմեն Շիտանյանի գլխավորությամբ, դիմեց քաղաքի ռուսական դպրոցներից մեկի ղեկավարությանը և թույլտվություն խնդրեց նրանց մոտ և նրանց հսկողության ներքո հայկական սիստեմատիկ դասընթացներ բանալու: Ռուսական դպրոցի ղեկավարությունը տվեց իր համաձայնությունը, իրենց հերթին Օդեսայում ապաստանած հայերն էլ Շիտանյանին ընտրեցին այդ դասընթացների տնօրեն, և այդ ձևով ստեղծված Օդեսայի հայկական դպրոցն սկսեց իր աշխատանքները: Ամենանախնական և պարզ մի դպրոց էր այդ, որտեղ ավանդումը կատարվում էր դասընթացային եղանակով, և որը հիմնականում գործում էր ամռան ամիսներին, այսինքն՝ այն ժամանակ, երբ ռուսական հիշյալ դպրոցը ամառային արձակուրդների պատճառով փակվում էր: Այդ նախնական դպրոցում սովորում էին ավելի քան հարյուր հայազգի երեխաներ» (Վեհափառ Հայրապետի հետ 1983 թ. ապրիլի 23-ի հարցազրույցից):

1918

ԱՊՐԻԼԻ 24 (ՄԱՅԻՍԻ 7).—Բուխարեստում, մի կողմից Ռումինական թագավորության և մյուս կողմից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի միջև կնքվում է անջատ հաշտության պայմանագիր;

ԱԾՈՒՆ.—Բուխարեստի հաշտության պայմանագրի հետևանքով (տես վերև), սկսվում է Ռուսաստանի տարբեր քաղաքներում բնակություն հաստատած ռումինահայ ընտանիքների կանգվածային վերադարձը դեպի Ռումինիա:

Աբրահամյան Ա. Գ., «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության», հատ. Բ, Երևան, 1967, էջ 129—141:

1919

ՍԿԻԶԲ.— Աբրահամ և Սիրանույշ Պալճյանները, իրենց որդու՝ Լևոն-Կարապետ Պալճյանի հետ միասին, թողնելով Օդեսան, վերադառնում են Ռումինիա և վերահաստատվում Բուխարեստում:

«Վազգեն Ա Հայրապետ Հայոց (կենսագրություն, կոնդակներ, քարոզներ)», Էջմիածին, 1958 թ., էջ 10:

«Հայրս կրկին ձեռքն առավ իր կոշկակարական գործիքները և իր Հակոբ ու Գրիգոր եղբայրների հետ միասին, եռանդով գործի անցավ: Պատերազմը, որը տեղի էր ունեցել նաև Բուխարեստ քաղաքում, մեծամեծ ավերածությունների ու կործանումների պատճառ, ճիշտ է, չէր եղել, բայց շատ մեծ էին մարդկանց հասցված նյութական վնասները: Ուրեմն՝ հորս և նրա եղբայրների համար գործ շատ կար: Մայրս, իրեն բնորոշ գործագիտությամբ, նորից սկսեց զբաղվել մեր տնային տնտեսությունը կազմակերպելու հետ կապված բազմաբնույթ հարցերով, միաժամանակ գործոն մասնակցություն բերելով քաղաքի հայկական համայնքի մշակութային կյանքին (Վեհափառ Հայրապետի հետ 1983 թ. ապրիլի 25-ի հարցազրույցից):

ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Բուխարեստում, Լևոն-Կարապետ Պալճյանը, ներկայացնելով իր համապատասխան փաստաթղթերը, ընդունվում է գերմանացի բողոքականների «Ewangelische Schüle» («Եվանգելիշե շուլե») դպրոցը:

19-րդ դարի վերջերին Բուխարեստում բացվում է «Ավետարանական դպրոցը», որը սեպ հետաքրքրող ժամանակաշրջանում արդեն աշխույժ գործունեություն էր ծավալում: Դպրոցը ենթարկվում էր ռումինական կառավարության Լուսավորության մինիստրությանը, դասավանդումը կատարվում էր ընդունված պարտադիր ծրագրին համապատասխան, բայց իր ներքին—աշխատանքային գործերը տնօրինելու հարցում ուներ որոշ ազատություններ: Մեկ հետաքրքրող ժամանակաշրջանում դպրոցի տնօրենն էր դոկտոր **Կապպելմանը:**

«История Румынии» т. I (1848—1917), Москва, 1971 г., стр. 568—621; Т. 2, (1918—1970), стр. 677—722.

1920

ՀՈՒՆԻՍ.— Լևոն-Կարապետ Պալճյանը ավարտում է Բուխարեստում գտնվող գերմանացի բողոքականների «Ավետարանական դպրոցի» «Ewangelische Schüle»):

«Առաջին տարին շատ դժվար էր: Ես գերմաներեն լեզուն բոլորովին չգիտեի և միանգամից ընկա լրիվ գերմանական միջավայր, որտեղ պետք

էր հաղորդակցվեի գերմաներեն, դաս պատասխանեի գերմաներեն, գրավոր աշխատանքները կատարեի գերմաներեն լեզվով: Ճիշտ է, քանի որ դպրոցում կային նաև այլազգի աշակերտներ, այսինքն՝ հայեր, հրեաներ, ռումինացիներ, նրանց նկատմամբ դպրոցի տնօրինությունը որոշ վիճումներ թույլ տալիս էր, բայց դա միայն որոշ չափով և այն էլ՝ գերապանցապես առաջին տարվա սկզբնական մեկ-երկու ամիսներին:

Դպրոցում ուսուցվող հիմնական առարկաներից մեկն էլ կրոնն էր, որը, հասկանալի է, մատուցվում էր ըստ բողոքականության սկզբունքների: Այդ առարկաներից մենք, այսինքն մի քանի հայ-լուսավորչական երեխաներս, ազատված էինք և կարող էինք տուն գնալ: Մյուս աշակերտները, օրինակ՝ կաթոլիկները կամ հրեաները ունեին իրենց «Հայր պատվելին» կամ «Խախամը», որոնք այդ ժամերին առանձին դասասենյակներում անց էին կացնում իրենց կրոնական պարապմունքները: Մյուս առարկաները, առանց բացառության, ընդհանուր էին բոլորի համար» (Վեհափառ Հայրապետի հետ 1983 թ. օգոստոսի 22-ի հարցազրույցից):

ԱՇՈՒՆ.— Բուխարեստում, ներքին տարաձայնություններից ու վիճաբանություններից հետո, վերսկսում է իր գոյությունը տեղի հայկական «Միսաքյան» (1926-ից՝ «Միսաքյան-Քեսիմյան») ազգային երկսեռ վարժարանը, որը դադարել էր գործելուց 1916 թ. կեսերից: Վարժարանն ուներ 91 աշակերտ-աշակերտուհի, տեսուչն էր Վարդան Մեջուտճյանը:

Նոր շրջանում սեփական ազգային դպրոցի գաղափարը ռումինահայերի մոտ ծնվել էր դեռ 19-րդ դարի սկզբներից: 1817 թ. Մանուկ պեյ Միրզայանցի նվիրատվությամբ, Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցու բակում կառուցվում է հայկական դպրոցի շենք, և նույն թվականին էլ իր գոյությունն է սկսում հայկական տարրական դպրոցը: Վերջինս գործում էր խիստ անկանոն և մի քանի տարի անց՝ փակվում է: 1847 թ. Ակնեցի մեծահարուստ վաճառական Վարդերես ամիրա Միսաքյանը իր միջոցներով կառուցում է դպրոցի նոր շենք, և այդպես իր գոյությունն է սկսում «Միսաքյան ազգային վարժարանը»: Վերջինս չորս դասարան ունեցող տարրական դպրոց էր, ուներ իր «Ծաղկոցիկը» (իմա. մանկապարտեզ), ավանդվում էին լեզուներ (հայերեն, ռումիներեն, ֆրանսերեն), պատմություն և աշխարհագրություն: 1904 թ. քաղաքական անընդհատ դեպքերի պատճառով դպրոցը փակվում է, բայց վերաբացվում է 1906-ին: «Միսաքյան ազգային վարժարանը» 1922-ին դառնում է ութամյա՝ վեց ուսուցիչներով, իսկ այդ թվականին կայացած ուսուցիչների համագումարը դպրոցական որոշակի ծրագրեր է մշակում ռումինահայ բոլոր վարժարանների, անշուշտ նաև «Միսաքյան ազգային վարժարանի» համար: 1926 թ. ռումինահայ մեծահարուստ Մարիամ Քեսիմյանի նվիրատվություններով, դարձյալ «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցու բակում, կառուցվում է դպրոցի երկհարկանի մի նոր շենք, և նրան տրվում է նոր՝ «Միսաքյան—Քեսիմյան ազգային վարժարան» անունը: Վերջինս, մանավանդ 1922 թ. հայերի՝ Ռումինիա գաղթից հետո, աստիճանական զարգացում է ապրում, 1932 թ. նրա աշակերտների թիվը հասնում է 405-ի՝ 16 ուսուցիչներով, իսկ 1932 թ. կառուցվում է մի նոր մասնաշենք ևս այլ վայրում: Այդ զարգացումը կայուն հենքի վրա է դրվում 1948 թ., երբ Ռումինական Ժողովրդական Հանրապետության Մինիստրների խորհուրդը որոշում է ընդունում, այդ ուսումնական տարվանից սկսած,

պետության միջոցներից վճարել Հանրապետության դպրոցների ուսուցիչներին (անշուշտ նաև՝ հայկական դպրոցների ուսուցիչներին) իրենց հասանելիք աշխատավարձը: 1946 և 1948 թթ. պարբերաբար Խորհրդային Հայաստան կատարվող հայրենադարձության հետևանքով, վարժարանի աշակերտների թիվը նվազել է մինչև 210-ի, ապա և՝ 85-ի, թեև այն մշտապես մնացել է որպես յոթնամյա կրթական հաստատություն: Հետագա տարիներին, «Միսաքյան-Քեսիսյան ազգային վարժարանը» որոշ ընդհատումներով շարունակելով իր գոյությունը՝ 1965 թ. վերջնականապես փակվում է:

Տարիների ընթացքում հիշյալ ազգային վարժարանի տնօրեններն են եղել հայ նոր գրականության դասական Վրթանես Փափազյանը, Վ. Մեշուտճյանը, Ա. Տիրացյանը, Գ. Ղազարյանը, Օ. Պերպերյանը, Հ. Դեվեճյանը, Վ. Գարակյոզյանը: Վարժարանի ուսուցիչներից էին Ս. Գանթարճյանը, **Լևոն-Կարապետ Պալճյանը** (հետագայում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.), Հ. Ղարիպյանը, Ս. Սրենցը. Հ. Պապիկյանը, Ղ. Կոնիկյանը, Խ. Եգանյանը, Զարեհ Պլպուլը և այլն:

«Սևան», 1957 թ. № 3 («Առավոտ մը Բուխարեստի հայկական վարժարանին մեջ»): **Հ. Ա. Սիրունի**, «Հայ եկեղեցին ռումեն հողի վրա. Նիկոլա Յորգա», Էջմիածին, 1966 թ. էջ 143—148:

1921

ՀՈՒՆԻՍ.—Լևոն-Կարապետ Պալճյանը ավարտում է Բուխարեստում գտնվող գերմանացի բողոքականների «Ավետարանական դպրոցի» («Ewangelische schüle») երկրորդ դասարանը և փոխադրվում է երրորդը:

1922

ՀՈԿՏԵՄԲԵՐ 30.— Ամենայն Հայոց կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Գևորգ Ե Սուրենյանցի (Թիֆլիսեցի) կոնդակը (№ 417) Հայաստանի և Սփյուռքի բոլոր թեմերի հոգևոր առաջնորդներին, համայն հոգևոր դասին հայոց և ի սփյուռս աշխարհի գտնվող հայությանը, Հայաստանի նորաստեղծ խորհրդային իշխանությանը հնարավոր բոլոր միջոցներով օգնություն և օժանդակություն ցույց տալու մասին[1]: Ընդհանրական և մասնակի համանման կոնդակներով Կաթողիկոսը հանդես է եկել նաև 1922 թ. հունվարի 24-ին (№ 54), 1922 թ. հունիսի 10-ին (№ 431), 1922 թ. հուլիսի 30-ին (№ 498), 1923 թ.

[1] **1920 թ. նոյեմբերի 29-ին**, Հայաստանի Ռազմա-Հեղափոխական կոմիտեն (նախագահ՝ Սարգիս Կասյան, անդամներ՝ Ասքանազ Մռավյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Ավիս Նուրիջանյան, Ալեքսանդր Բեկզադյան, Իսահակ Դովլաթյան), Իջևանում հրապարակում է Դեկլարացիա, Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու մասին: Հաջորդ օրը, **նոյեմբերի 30-ին**, Սարգիս Կասյանը հեռագրում է Լենինին, տեղեկացնելով «Համաշխարհային հեղափոխության առաջնորդին» Հայաստանում խորհրդային իշխանության լիակատար և վերջնական հաղթանակի փաստը: **Դեկտեմբերի 4-ին**, ռուսական 11-րդ Կարմիր բանակի զորամասերը, հայկական աշխարհազորային գումարտակի հետ համատեղ (ընդհանուր հրամանատար՝ Պյոտոր Վասիլևիչ Կուրիշկո, հայկական աշխարհազորային գումարտակի հրամանատար՝ Ս. Բաղդասարյան), տեղական բնույթի մարտերից հետո մտնում են Երևան և ազատագրում են այն: Երևանը հայտարարվում է Հայաստանի նորաստեղծ Խորհրդային Հանրապետության մայրաքաղաք:

Գևորգ Ե. Կաթողիկոսի վերոհիշյալ կոնդակը նշանավոր է նաև այն առումով, որ Հայաս-

նոյեմբերի 1-ին (№ 343), 1925 թ. հոկտեմբերի 10-ին (№ 622), 1927 թ. նոյեմբերի 17-ին (№ 944) և այլն:

ՎԵՐՋԻՆ ԿՈՆԴԱԿԻՑ.— «Բավական ապգք Խորհրդային Միութեան, բերկրութեամբ սրտի տօնեն վտասնամեայ յոբելեան հաստատութեան նորոյ Իշխանութեանս, որպէս վհետևանս Մեծի յեղափոխութեանն կատարելոյ ի սահմանս նախկին միապետական իշխանութեան Ռուսաստանի: Իրաւամբ համարի այս՝ տօն ուրախութեան բոլորից ապգաց միացելոց ընդ դրօշիւք հաւասարութեան և եղբայրութեան, որ յերեկն և յեռանդն միայն ի ծառայութեան կային ըստ քաղաքականին, ըստ տնտեսականին, ըստ կրթականին և ըստ ամենայն ապգային իրաւանց:

Տօնն այս մեծ է առաւելապէս վասն ժողովրդեան և աշխարհիս մերոյ, վի համաշխարհային պատերազմն և ընդդիմամարտութիւնք դրացի ապգաց, ոխացելոյ ընդ միմեանս ի ձեռն բանսարկուին, յաւեր և ի կորուստ դարձուցին վողջոյն ապգն մեր և վերկիր: Զարդիս կիսամեռ և հիւծեալ ժողովուրդն մեր յառնէ յաւերակաց ի նոր կեանս և ի շինութիւն հայրենեաց՝ շնորհիւ խաղաղութեան, հաւասարութեան ապգաց և համերաշխութեան դրացեաց մերոց, պարգևելոց ի ձեռն Խորհրդային իրաւակարգի: Ապաքէն յայտ է այս ամենայն որդւոց մերոց, բնակելոց ի Հայաստան աշխարհիս և այսու յայտ առնեմք նաև որդւոց մերոց, բնակելոց յայլ հասարակապետութիւնս Խորհրդային Միութեան և յոլորտս վանական մասանց աշխարհի...

Արդ, սիրեցեալ վաւսկք Մեր, որպէս ի նախկին կոնդակս բազմիցս յորդորեալ է Մեր սատար հանդիսանալ նիւթապէս և բարոյապէս շինութեան երկրիս, վսրդիս առաւել ևս յորդորեմք վամենայն հաւատացեալս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, որք ի սփիւռս աշխարհի, եռեալ ի սիրտ և ի հոգի և ջերմագին սիրով հաղորդ լինիլ ի սրբական գործն վերակենդանութեան ապգիս և երկրիս, տեսանելով վպտուղն խաղաղութեան և ջանից Կառավարութեան Հայաստան աշխարհիս: Ասացուած նախնեաց է, թէ «Ծառն արմատով է ծառ, տունն՝ հիմամբ» (վկայակոչումը կատարված է Ղ. Ալիշանի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունից. Ս. Շ.). արմատք կենդանութեան և հիմունք հաստատութեան ժողովրդեանս Հայկազեան սեռի, է մայր երկիրն մեր և ի նմա բնակեալ ժողովուրդն, ուստի և յորդորեմք վձեզ հոգւոյ ակամբ տեսանել վամենայն գործս և վբարեկարգութիւնս, որք կատարին ի շինութիւն երկրիս և ջերմեռանդ սրտիւ մասնակից հանդիսանալ նիւթապէս և բարոյապէս: Հուսկ ապա, առ ձեզ են բանք Մեր, Առաջնորդք, հովիւք և քահանայք ժողովրդեանս, որոց պատուիրեմք... յորդորեցէք վհօտ ձեր կեալ ի սէր և ի համերաշխութիւն, գործակից լինել վերաշինութեան երկրիս, որպէս կենդանի

տանում խորհրդային կարգերի հաստատումից գրեթե անմիջապես հետո, Հայ Եկեղեցին ու նրա հոգևոր առաջնորդները անհապաղ ձեռք են մեկնել պատմականորեն նորին ու առաջավորին և իսկույն հանդես են եկել որպես խորհրդային նորաստեղծ կարգերի պաշտպան ու կողմնակից· (Կարապետյան Հ., «Մեծ պայքարի մարդիկ (գիրք Ա.)» Երևան, 1963 թ., 483 էջ: «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 5-րդ, Երևան, 1979 թ., էջ 999: «11-րդ Կարմիր Բանակի մարտական ուղին Հայաստանում Սովետական կարգերի հաստատման և ամրապնդման ժամանակաշրջանում (1920 թ. մայիս—1921 թ. նոյեմբեր). փաստաթղթերի ժողովածու», Երևան, 1978 թ., 300 էջ: **Мнацаканян А. Н.**, «Посланцы Советской России в Армении (Об участниках боев за установление Советской власти в Армении)», Ереван, 1959 г., 419 стр.

մասն միոյ մարմնոյ ապգիս, որոյ սիրտ և կենտրոն է՝ հայրենի երկիրն մեր և բնակեալ ի նմա ժողովուրդն: Աղօթեսցուք առ Աստուած, զի հաստատուն և յարատև արասցէ զխաղաղութիւն յերկրի մերում, և զվաստակս ժողովրդեանս ի շինութիւն իւր արդիւնաւորեսցի ըստ մարգարէին, թէ «Շինեսցեն տունս և ինքեանք բնակեսցին, տնկեսցեն այգիս և ինքեանք կերիցեն զպտուղ նոցա»:

1927 թ. նոյեմբեր 17

Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. № 239, վավ. № 184, 235, 242: